**Արձանագրություն N 3**
**«ՍՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-01/19» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի բանակցությունների նիստի**

**ի. Գորայք** «05» սեպտեմբեր 2019թ.
ժամը 13:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| հանձնաժողովի նախագահ՝ | Ա.Մարգարյան-երկրաբան-ինժեներ |
| հանձնաժողովի անդամներ՝ | Ս.Մուսաթյան- առաջատար մասնագետ- հաշվապահ |
| | Ս.Անտոնյան-սոց.աշխատող |
| հանձնաժողովի քարտուղար՝ | Ս.Գրիգորյան-գնումների համակարգող |

1"Սեպտեմբերի 05-ին ժամը 13:00-ին ՀՀ Սյունիքի մարզ, Գորայք համայնքի բնակավայրի Բ. Վարդանյան 11 հասցեում տեղի ունեցավ բանակցությունների նիստը, որին ներկայացել էր միայն Սիսիանի (Նոր Բակ) «Նորոգշին» ԲԲԸ-ի ներկայացուցիչը: Բանակցությունների արդյունքում գների փոփոխություն տեղի չունեցավ:

2. **Հայտերը գնահատվել** են «ՍՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-01/19» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և գնահատվել է «Բավարար»:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

3"Հաշվի առնելով մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները

| հ/հ | Մասնակցի անվանումը | Առաջարկված գին, առանց ԱԱՀ | Ընդհանուր գին |
|---|---|---|---|
| | Նախահաշվային գին | 64202690 | 77043220 |
| 1 | «Հիդրո»ՍՊԸ | 46866667 | 56240000 |
| 2 | Սիսիանի (Նոր Բակ) «Նորոգշին»ԲԲԸ | 44206000 | 53047200 |

**հանձնաժողովը որոշեց**

3.1. հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ **նվազագույն գնային** առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **Սիսիանի (Նոր Բակ) «Նորոգշին»ԲԲԸ-ին:**

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

3. 2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները, հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով՝

- հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից և գրանցամատյանի արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում.
- իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում:
- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնելու առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

- Ծանուցելու է ընտրված մասնակիցներին՝ ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :*

4. «ՍՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-01/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել սեպտեմբերի 11-ին 12:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ, Գորայք համայնք, բնակավայր Գորայք, Բ"Վարդանյան 11 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :*

Հանձնաժողովի

Նախագահ՝ _______________ Ա. Մարգարյան

Անդամ՝ _______________ Ս. Մուսաթյան

_______________ Ս. Անտոնյան

Քարտուղար՝ _______________ Ս. Գրիգորյան